ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵ ԱՐՄԵՆԻ

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Պ. Հ. Գևորգյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ի. Կ. Կարապետյան**
	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ **Լ. Խ. Հայրապետյան**
Առաջատար կազմակերպություն՝	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ. նոյեմբերի 29-ին, ժամը 14^{00}-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի մանկավարժության 058 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, ք. Երևան, Աբովյան $52^{ա}$, Երևանի պետական համալսարանի 8-րդ մասնաշենք, թիվ 208 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024թ. հոկտեմբերի 29-ին:

058 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ **Ա. Փ. Ղազարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ընտանիքը հանդիսանում է երեխայի անձի ձևավորման ու զարգացման առաջին սոցիալական ինստիտուտը: Ընտանիքում երեխան սովորում է սիրել, հարգել, վստահել՝ նույնը տեսնելով իր ծնողներից, ընտանիքի այլ անդամներից: Միայն ընտանեկան դրական և բարենպաստ մթնոլորտում է հնարավոր դաստիարակել և մեծացնել հասարակական կարևոր արժեքներն իր մեջ կրող, բարեկիրթ, պատասխանատու, քաղաքավարի ու խելացի քաղաքացի:

Կյանքի առաջին տարիներն ընտանիքում անցկացնելուց հետո երեխան մուտք է գործում մի միջավայր, որտեղ սահմանված կանոններն էականորեն տարբերվում են ընտանեկան կանոններից, իսկ դաստիարակության և կրթության գործընթացն իրականացնում են այդ գործի համար նախատեսված բանիմաց մարդիկ՝ ուսուցիչները: Միայն դպրոցի և ընտանիքի նպատակադրված և ճիշտ համագործակցության արդյունքում են երեխայի համար դժվարությունները դառնում հեշտ հաղթահարելի, իսկ սովորելը՝ հաճելի:

Դպրոցի և ընտանիքի արդյունավետ համագործակցությունը եղել և մնում է կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման կարևոր նախադրյալներից մեկը և գտնվում է մանկավարժների ուշադրության կենտրոնում: Առանց այդ համագործակցության չի կարող լիարժեք իրականացվել ոչ միայն դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացը, այլև անձի լիարժեք զարգացումը:

Դպրոցի և ընտանիքի փոխգործակցության խնդիրը մշտապես եղել է մանկավարժների ուշադրության կենտրոնում: Այս հարցին անդրադարձել են մի շարք հեղինակներ՝ Ա. Ավագյան, Մ. Հարությունյան, Լ. Բուտովա, Ա. Կուսաինովա, Ե. Մաքսիմենկո, Գ. Չերկասովա, Ա. Տարականովա, Ա. Տորտաևա, Մ. Վերինա և ուրիշներ: Սակայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների հանրակրթական դպրոց հաճախելուց հետո այն առավել խորքային դարձավ, քանի որ ուսուցչի աշխատանքին ավելացավ ևս մի «պարտականություն»՝ հասկանալ, ճանաչել և ընդունել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին, ունենալ անձնային դրական դիրքորոշում և կարողանալ այն փոխանցել աշակերտներին ու ծնողներին:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ծնողներն էլ հանդիպեցին այլ դժվարությունների՝ ճանաչել և ընդունել երեխայի առանձնահատկությունը, հարմարվել և նպաստել երեխայի հարմարմանը նոր միջավայրում, հասկանալ ինչպես աջակցել երեխային, ինչպես նպաստել դասընկերների հետ փոխհարաբերությունների հաստատմանը: Հենց այս բարդությունով էլ պայմանավորված է մեր հետազոտության թեմայի արդիականությունը և ընտրությունը:

Հետազոտության նպատակը: Հետազոտել դպրոց-ընտանիք համագործակցության արդի վիճակը և մշակել ընդհանուր ներառականության պայմաններում համագործակցության մոդել, այդ համագործակցության իրականացման նոր դասընթացներ:

Հետազոտության խնդիրները.

1. ուսումնասիրել և վերլուծել թեմային վերաբերող գիտական աղբյուրները,
2. ուսումնասիրել դպրոց-ընտանիք համագործակցության արդի վիճակը,
3. պարզել ծնողների և ուսուցիչների դիրքորոշումը ներառական կրթության նկատմամբ,
4. մշակել դպրոց-ընտանիք համագործակցության մոդել,
5. իրականացնել հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումներ և վերլուծել արդյունքները,
6. մշակել, ներդնել և փորձարարական ճանապարհով հաստատել «Դպրոց-ընտանիք համագործակցությունն ընդհանուր ներառականության համատեքստում» դասընթացը:

Հետազոտության գիտական նորույթը.

1. իրականացված դասընթացների և սոցիոլոգիական հարցումների արդյունքների հիման վրա գրանցվել է դպրոց-ընտանիք համագործակցության վերաբերյալ ծնողների և մանկավարժների դիրքորոշման դրական փոփոխություն,
2. մշակվել են կրթության արդի պայմաններին համապատասխան դպրոց-ընտանիք համագործակցության մոդել, դրա իրականացման նոր ձևեր, սկզբունքներ և մեթոդներ,
3. մշակվել, փորձարկվել, ներդրվել և հաստատվել են «Դպրոց-ընտանիք համագործակցությունն ընդհանուր ներառականության

համատեքստում» դասընթացները ծնողների, մանկավարժների և ուսանողների համար,

4. իրականացվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքները:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. հիմնավորվել է, որ դպրոց-ընտանիք համագործակցությունն արդի պայմաններում ունի վերանայման կարիք,

2. դպրոց-ընտանիք համագործակցության բարելավումը պայմանավորված է կրթության ներառականության նկատմամբ մանկավարժների և ծնողների դրական դիրքորոշմամբ,

3. առաջարկվող մոդելը, դպրոցի և ընտանիքի համագործակցության սկզբունքները, մեթոդները և ձևերը նպաստում են այդ գործընթացի արդյունավետության բարձրացմանը,

4. «Դպրոց-ընտանիք համագործակցությունն ընդհանուր ներառականության համատեքստում» դասընթացը նպաստում է ծնողների մանկավարժական լուսավորությանը և մանկավարժների վարպետության կատարելագործմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Մանկավարժության տեսությունը հարստացվել է դպրոց-ընտանիք համագործակցության նոր ձևերով, սկզբունքներով և մեթոդներով:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել հանրակրթական դպրոցների ուսուցիչների, վարչական աշխատողների կողմից դպրոց-ընտանիք համագործակցության ապահովման գործընթացում: Այն կարող է օգտագործվել նաև մանկավարժներ պատրաստող և վերպատրաստող հաստատություններում տարբեր դասընթացների բովանդակության մեջ:

Հետազոտության կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, 91 անուն օգտագործված գրականության ցանկից և 8 հավելվածից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 214 էջ: Այն ներառում է 5 աղյուսակ, 31 տրամագիր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածական մասում հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացված է գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ **«Կրթության կազմակերպատեսական հիմքերը համընդհանուր ներառականության պայմաններում»** գլխում՝ կազմված երեք ենթագլխից, դիտարկվել են համընդհանուր ներառականության անցման վերաբերյալ տեսական և հայեցակարգային մոտեցումները:

Առաջին՝ **«Սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները»** ենթագլխում անդրադարձել ենք կենսագործունեության սահմանափակում ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքին անտիկ քաղաքակրթությունից մինչև մեր օրերը, և նկատում ենք, որ վերաբերմունքը զարգացման առանձնահատկություն ունեցող անձանց նկատմամբ դարձել է մարդասիրական՝ երեխայասպանությունից վերափոխվելով համընդհանուր ներառման: Տրվել են նաև հաշմանդամության բնորոշումները, ներկայացվել՝ գոյություն ունեցող մոդելները:

Երկրորդ՝ **«Համընդհանուր ներառականությունը և օրենսդրական հիմքերը»** ենթագլխում ներկայացված են ՀՀ «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքները, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը: Կրթության կազմակերպման օրենսդրական հիմքերը փոփոխվել են համընդհանուր ներառականության տարածման հետևանքով, ինչը դրական տեղաշարժ գրանցեց զարգացման առանձնահատկություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանության գործում:

Երրորդ՝ **«Դպրոցի պատրաստվածությունը համընդհանուր ներառականության իրականացմանը»** ենթագլխում ուշադրության է արժանանում դպրոցի կողմից անհրաժեշտ քայլերի ձեռնարկման կարևորությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար անարգել միջավայր ստեղծելու հարցում, որի համար անհրաժեշտ է.

1. դպրոցի աշխատակիցներից հատուկ խմբի ձևավորում,
2. խմբի կողմից գործընթացի իրականացման համար դպրոցի պատրաստվածության վիճակի ռեալ գնահատում,
3. խմբի աշխատանքների վերլուծություն, բարելավման կարիք ունեցող ոլորտների վերհանում,
4. ծրագրի հետագա ընթացքի պլանավորում, որը կտանի հաջողության և կայունության:

Այսօր դպրոցում առկա բացթողումները հիմնականում կապվում են մատչելի պայմանների, միջավայրային հարմարությունների բացակայության հետ, սակայն ոչ պակաս կարևոր խնդիր է նաև ուսուցիչների և դասընկերների ոչ ճիշտ վերաբերմունքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների նկատմամբ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Դպրոց-ընտանիք համագործակցության համակարգը»** գլուխը կազմված է երեք ենթագլխից, որտեղ անդրադարձ է կատարվել դպրոց-ընտանիք համագործակցության բովանդակությանը, սկզբունքներին, ձևերին ու մեթոդներին, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների կրթության կազմակերպման առանձնահատկություններին:

Առաջին՝ **«Դպրոց-ընտանիք համագործակցության բովանդակությունը»** ենթագլխում ուսումնասիրվել է դաստիարակության, կրթության, երեխայի անձի լիարժեք ձևավորման համար անհրաժեշտ բարենպաստ միկրոկլիմայի առկայությունը, որը ուսուցչի և ծնողի, ուսուցչի և աշակերտի, աշակերտի և դասընկերների միջև որակյալ հարաբերություններ հաստատելու, փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության, փոխվստահության և իրար հասկանալու գրավականն է: Այս ամենի առկայությունն է միայն հնարավորություն տալիս, որ աշակերտը զարգանա առողջ միջավայրում, իր մեջ կրի բարոյական բարձր արժեքներ, լինի պատասխանատու:

Դպրոց-ընտանիք համագործակցության գործում կարևոր է ծնողների հետ համագործակցային հարաբերությունների սահմանումը, որն առաջանում է, երբ ծնողը գիտակցում է երեխայի խնդիրը, գալիս է ուսուցչի մոտ երեխայի ուսուցման և դաստիարակության վերաբերյալ հարցերով՝ ակնկալելով համատեղ լուծում գտնել: Եթե ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտը ցուցաբերում է ավելի լավ արդյունքներ, նրա մոտ

զարգանում են սոցիալական հմտություններ, կարգավորվում և հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լայն հնարավորություններ է ունենում:

Երկրորդ՝ **«Դպրոց-ընտանիք համագործակցության ձևերը և մեթոդները»** ենթագլխում քննարկվում են դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերն ու մեթոդները:

Բացի ավանդական ձևերից՝ համադպրոցական ծնողական ժողով, դասարանական ծնողական ժողով, խորհրդատվություն, անհատական աշխատանք, հանգստի համատեղ կազմակերպում, տնայց, անդրադարձ է կատարվել նաև դպրոց-ընտանիք համագործակցության մի շարք նոր ձևերի՝ ծնողական ակումբ, ծնողական դասախոսություն և սեմինար, ծնողական դպրոց, վարպետության դաս, խնդիրների քննարկում և այլն, որոնք դպրոցներում դեռևս չեն կիրառվում:

Դպրոցի և ընտանիքի համատեղ աշխատանքի բոլոր ձևերի բովանդակությունն ամբողջանում է նրանց ակտիվ դաստիարակչական փոխգործակցության կազմակերպման մեջ՝ ուղղված աճող սերնդի բազմակողմանի զարգացմանը: Այդ համագործակցության հիմքում դպրոցի անընդհատ ուշադրությունն է երեխայի զարգացմանը, ուսուցիչների ժամանակակից և մանկավարժորեն հիմնավորված խորհուրդները, յուրաքանչյուր ընտանիքի առանձնահատկությունների ու հնարավորությունների ուսումնասիրումը, դաստիարակության գործում դժվարությունների հանդիպելիս ընտանիքին գործնական օգնության ցուցաբերումը:

Դպրոց-ընտանիք համագործակցության գործում կարևոր են նաև այն մեթոդները, որոնք խթան են հանդիսանում այդ համագործակցության համար՝ զրույց, բանավեճ, անկետավորում, խնդիրների քննարկում: Ընտանիքի ուսումնասիրման մեթոդ է շարադրությունը՝ ընտանիքի մասին լիարժեք պատկերացում կազմելու, նրա հոգևոր զարգացման մակարդակը բացահայտելու համար:

Երրորդ՝ **«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների կրթության կազմակերպման առանձնահատկությունները»** ենթագլխում անդրադարձ է կատարվել մանկավարժական ներգործության մի շարք հնարների (ստեղծարար հնարներ, աշակերտի առաջընթացի բարձրացմանը նպաստող, բարոյապես արժեքավոր գործողություններ

կատարելուն, ճիշտ վարքագծի հմտության կուտակմանն աշակերտին ներգրավող, արգելակման և այլն) կիրառման առանձնահատկություններին, մշակվել են ցուցումներ այդ մեխանիզմների կիրառման հետ կապված:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար անհրաժեշտ է լրացուցիչ, երբեմն էլ հատուկ ուսումնական աջակցություն՝ օգնելու նրանց լիարժեք մասնակցել դասերին և իրացնել իրենց ներուժը:

Ատենախոսության երրորդ՝ **«Դպրոց-ընտանիք համագործակցության իրականացման ուղղությամբ հետազոտական աշխատանք»** գլուխը ներառում է կատարված հետազոտական աշխատանքը և կազմված է չորս ենթագլխից:

Առաջին՝ **«Դպրոց-ընտանիք համագործակցության վերաբերյալ ախտորոշիչ աշխատանքների վերլուծություն»** ենթագլխում ներկայացված է 2022-2023 ուսումնական տարում Վանաձոր քաղաքի թիվ 1, 3, 4, 6, 18, 22, 25 հիմնական դպրոցների ծնողների և մանկավարժների շրջանում կատարված դիտման, հարցումների, ինչպես նաև նույն դպրոցների տնօրենների տեղակալների հետ անցկացված զրույցի արդյունքների վերլուծությունը:

Դիտման արդյունքներով պարզվեց, որ ծնողական ժողովներին մի խումբ ծնողներ գալիս էին ուշացած, դասղեկները միայն պահանջներ էին ներկայացնում, դժգոհում երեխաների վարքից և առաջադիմությունից, ուսուցիչները չէին մասնակցում ժողովներին, ծնողների՝ ուսուցիչներին վերաբերվող հարցերը մնում էին անպատասխան, դասղեկն ուղղորդում էր անձամբ մոտենալ ուսուցչին: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ծնողները պասիվ էին, նախընտրում էին չխոսել, չմիջամտել, հարցեր չէին ուղղում:

2022 թ.-ին Վանաձոր քաղաքի թվով 7 հիմնական դպրոցներում անցկացված սոցիոլոգիական հարցումներին մասնակցել է 80 մանկավարժ և 170 ծնող: Ծնողների և մանկավարժների շրջանում կատարված սոցիոլոգիական հարցումների նպատակն էր պարզել դպրոցի և ընտանիքի համագործակցության մակարդակը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ծնողների ներգրավվածությունը դպրոցի գործունեությանը, երեխաների ուսումնական գործընթացին:

Ստորև ներկայացնում ենք 2022-2023 ուսումնական տարում *ծնողների շրջանում* կատարված սոցիոլոգիական հարցումների արդյունքները.



Տրամագիր 1. *Ուսուցիչների հետ համագործակցության ի՞նչ ձևեր կարող եք նշել*



Տրամագիր 2. *Որքա՞ն հաճախ եք այցելում դպրոց*

Տրամագիր 1-ում ծնողները ուսուցիչների հետ համագործակցության ձևերից առավելապես նշել են հանդիպում/զրույցը՝ 45% և սոցիալական ցանցերի միջոցով ներխմբային հաղորդակցությունը՝ 35%: Առկա է նաև չգիտեմ պատասխանը՝ 2%:

Տրամագիր 2-ում ծնողների ընդամենը 12%-ն է ամեն օր հաճախում դպրոց, հիմնականում դպրոց են այցելում ամիսը մեկ անգամ՝ 48%, իսկ ըստ անհրաժեշտության՝ 30%-ը, դպրոց չի այցելում՝ 2%-ը:

Մանկավարժների շրջանում 2022-2023 ուսումնական տարում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքներն են.



Տրամագիր 3. *Ծնողների հետ հանդիպման ժամանակ ի՞նչ հարցեր եք քննարկում*



Տրամագիր 4. *Ընտանիքի հետ համագործակցությունը սահմանափակվո՞ւմ է միայն ծնողական ժողովներով, թե՞ կարող եք նշել այլ ձևեր ևս*

Տրամագիր 3-ում մանկավարժները ծնողների հետ քննարկում են երեխայի ուսումնական գործընթացին վերաբերող հարցեր՝ 64%, երեխայի համար կարիքին համապատասխան պայմանների ստեղծմանը վերաբերող հարցեր՝ 48%:

Տրամագիր 4-ում մանկավարժների 41%-ը նշել են, որ ընտանիքի հետ համագործակցությունը սահմանափակվում է միայն ծնողական ժողովներով, առանձնացրել են նաև անհատական հանդիպումները՝ 24% և հեռախոսազանգը՝ 23%:

Ելնելով տնօրենների տեղակալների հետ մեր ունեցած զրույցներից՝ արձանագրում ենք, որ տնօրենի տեղակալները որքան էլ մասնակցում են ընտանիքների հետ համագործակցությանը, միևնույն է, այնքան էլ լիարժեք պատկերացում չունեն այդ համագործակցության արդյունավետ իրականացման ձևերի և մեթոդների մասին, և իրենց կողմից առանձնապես վերահսկողություն չի իրականացվում:

Այս և մի շարք այլ հարցերի վերլուծության արդյունքում հանգում ենք նրան, որ դպրոցի համագործակցությունն ընտանիքի հետ թույլ է և այն ունի կատարելագործման կարիք:

Մեր առջև դրված նպատակին հասնելու ճանապարհին ձևավորվեց դպրոց-ընտանիք համագործակցության մոդել, որում ներառված են մեր կողմից առաջարկվող ձևերը, սկզբունքները և մեթոդները:

Աղյուսակ 1



Վերոբերյալ դպրոց-ընտանիք համագործակցության մոդելը նպատակ ունի ստեղծել բովանդակալից կապեր, խթանել և հզորացնել ընտանիքների ակտիվ մասնակցությունը, փոխակերպել դպրոց-ընտանիք համագործակցությունը դինամիկ գործընկերության:

Երկրորդ՝ **«Դպրոց-ընտանիք համագործակցությունն ընդհանուր ներառականության համատեքստում» դասընթացը որպես ծնողների մանկավարժական լուսավորության և մանկավարժների կատարելագործման միջոց»** ենթագլխում, մեր հետազոտության արդյունքներից ելնելով, մշակել ենք դասընթաց, որը փորձարկվել է Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոցի 3-րդ դասարանների ծնողների և մանկավարժների շրջանում՝ մեկ տարի ժամկետով, նպատակ ունենալով նպաստել ծնողների մանկավարժական գիտելիքների հարստացմանը, մանկավարժների մասնագիտական կարողունակությունների զարգացմանը, ներառական կրթության նկատմամբ դրական դիրքորոշման ձևավորմանը, դպրոց-ընտանիք համագործակցության ամրապնդմանը:

Դասընթացի ծրագրում ներառված թեմաները վերաբերում են ներառական կրթությանը, դպրոցի և ընտանիքի համագործակցությանը, երեխաների զարգացման առանձնահատկություններին:

Երրորդ՝ **««Դպրոց-ընտանիք համագործակցությունն ընդհանուր ներառականության համատեքստում» հատուկ դասընթացը որպես ուսանողների մասնագիտական կայացման միջոց»** ենթագլխում անդրադարձել ենք Հասարակական գիտությունների ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների շրջանում անցկացված դասընթացին: Դասընթացում ներառված թեմաները ընդգրկել են ներառական կրթության զարգացման պատմությունից մինչև մեր օրերում ներառական կրթության կարևորությունը, զարգացման առանձնահատկությունների էությունը, և մանկավարժներին ու ծնողներին մասնագիտական աջակցությունը, որոնք գործնականում օգտակար են ապագա մասնագետների համար՝ երեխաների, ծնողների և մանկավարժների հետ աշխատանքում:

Չորրորդ՝ **«Դասընթացների փորձարկման արդյունքների վերլուծություն»** ենթագլխում ներկայացված է 2024թ.-ին դասընթացի ավարտից հետո Վանաձորի թիվ 25 հիմնական դպրոցի և Վանաձորի թիվ 1,

3, 4, 6, 18, 22 հիմնական դպրոցների ծնողների, մանկավարժների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների համեմատական վերլուծությունը: Կատարված հարցումների նպատակն էր գրանցել դպրոց-ընտանիք համագործակցության վերաբերյալ ծնողների և մանկավարժների դիրքորոշման դրական փոփոխությունը, համագործակցության բարելավումը՝ ընդհանուր ներառականության պայմաններում:

2023-2024 ուստարում ծնողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումների վերլուծություն.

Փորձարարական խումբ



Ստուգիչ խումբ



Տրամագիր 5. Որքա՞ն հաճախ եք այցելում դպրոց

Տրամագիր 5-ում տեսնում ենք ծնողների դպրոց այցելելու հաճախականությունը, ըստ որի՝ ամեն օր դպրոց է հաճախում փորձարարական խմբի մասնակիցների 81%-ը, ստուգիչ խմբի մասնակիցների ընդամենը 16%-ը:

Փորձարարական խումբ



Ստուգիչ խումբ



Տրամագիր 6. Դպրոցի աշխատակիցներից ու՞մ հետ եք համագործակցում

Ե՛վ փորձարարական, և՛ ստուգիչ խմբերի ծնողները համագործակցում են դասղեկի հետ՝ 94% և 76%, ուսուցչի օգնականի հետ՝ 82% և 49%, սակայն ի տարբերություն ստուգիչ խմբերի, որտեղ բացակայում է սոցիալական մանկավարժի հաստիքը, փորձարարական խմբի մասնակիցների 77%-ը համագործակցում է նաև սոցիալական մանկավարժի հետ (այստեղ սոցիալական մանկավարժի հաստիքը պահպանվել է):

Ընդհանրացնելով դասընթացի ավարտից հետո Վանաձորի թիվ 25 հիմնական դպրոցի մանկավարժների կողմից ստացված հարցումների արդյունքները՝ ցանկանում ենք ընդգծել, որ մանկավարժների և ծնողների միջև համագործակցությունն ավելի բարձր և որակյալ մակարդակի վրա է գտնվում, փոխադարձաբար ակտիվացել են աշխատանքները, ինչը, ըստ մանկավարժների, պայմանավորված է ծնողների մանկավարժական մշակույթի մակարդակի փոփոխությամբ, դաստիարակչական հարցերի նկատմամբ արդեն այլ դիրքորոշում ունենալու, միմյանց նկատմամբ փոխօգնություն դրսևորելու, մշտապես համագործակցելու, քննարկումների համար բաց լինելու պատրաստակամությամբ:

Ելնելով ստացված արդյունքներից՝ կարող ենք փաստել, որ դասընթացի մասնակիցների ընկալումները դպրոցի հետ համագործակցության և դրա ձևերի ու մեթոդների վերաբերյալ փոխվել են:

Դասընթացի յուրացման ժամանակ նկատվեց, որ մեծացել է ծնողների ակտիվությունը, ինչը դրսևորվեց միմյանց նկատմամբ փոխօգնության, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ծնողներին ներգրավելու, դասղեկի, առարկայական ուսուցիչների, սոցիալական մանկավարժի, հոգեբանի, տնօրենի տեղակալների և ուսուցչի օգնականների հետ առավել մտերմիկ և վստահելի հարաբերություններ կառուցելու, դպրոցի հեղինակության բարձրացմամբ: Դպրոցի գործունեության, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների առանձնահատկությունների մասին գիտելիքների ձեռքբերման, նրանց ընտանիքներին աջակցության ցուցաբերման, երեխաների նկատմամբ մանկավարժական ճիշտ մոտեցումների և դաստիարակության վերաբերյալ դասընթացը հանրակրթական ուսումնական հաստատությունում մեծացրեց դպրոց-ընտանիք համագործակցության արդյունավետությունը:

Ուսանողներին ևս դասընթացի ավարտից հետո տրվել է հետադարձ կապի գնահատման թերթիկ (https://docs.google.com/forms/d/1L8o9L7VLHJ_-THcJB6cgxuy2-U5mL1FmK8qmlKeo_u0/viewanalytics), որտեղ նրանք բարձր են գնահատել դասընթացի բովանդակությունն իրենց մասնագիտական կայացման գործում:

Ուսումնասիրելով դպրոցի և ընտանիքի համագործակցության իրականացումն ընդհանուր ներառականության պայմաններում՝ ցանկանում ենք կատարել որոշ նկատառումներ.

1. Մեր կարծիքով ներառական կրթության սահմանումը լիարժեք չէ, ուստի առաջարկում ենք մեր սահմանումը: Այն է. «Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար զարգացման առանձնահատկություններին համապատասխան անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական և սոցիալականացման գործընթացներին առավելագույն մասնակցության և ներառման, հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքի ապահովումն է»:

2. Վանաձորի մի շարք հիմնական դպրոցներում մեր կողմից կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս առաջարկել դպրոցի և ընտանիքի համագործակցության հետևյալ ձևակերպումը. «Դպրոց-ընտանիք համագործակցությունը դպրոցի աշխատակիցների և յուրաքանչյուր աշակերտի ընտանիքի միջև գործընկերային հարաբերությունների հաստատման գործընթացն է, որի արդյունքում բոլոր կողմերի մոտ գրանցվում է որոշակի առաջընթաց»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված տեսական և փորձարարական աշխատանքների արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Մանկավարժների և ծնողների հետ անցկացված ուսումնասիրությունների վերլուծությունը ցույց տվեց, որ դպրոց-ընտանիք համագործակցությունը լիովին չի համապատասխանում ժամանակակից պահանջներին և ունի վերանայման կարիք:
2. Ոչ բոլոր ծնողներն ու մանկավարժներն ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ:
3. Դպրոց-ընտանիք համագործակցության մասին հայ և օտարազգի մանկավարժների գաղափարների, դաստիարակչական հիմնահարցերով զբաղվող հետազոտողների աշխատանքների ուսումնասիրության և գիտատեսական հենքի վրա մշակված համագործակցության մոդելը, ինչպես նաև «Դպրոց-ընտանիք համագործակցությունն ընդհանուր ներառականության համատեքստում» դասընթացը նպաստեցին հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտների ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության և դպրոցի ու ընտանիքի միջև համագործակցության բարձրացմանը:
4. «Դպրոց-ընտանիք համագործակցությունն ընդհանուր ներառականության համատեքստում» դասընթացը նպաստեց մանկավարժների և ծնողների դրական դիրքորոշմանը, մանկավարժական մշակույթի ձևավորմանը և համագործակցության ակտիվացմանը, ինչն էլ հանգեցրեց այդ համագործակցության արդյունավետությանը:
5. Դասընթացի ավարտից հետո իրականացված սոցիոլոգիական հարցումները վկայում են, որ գրանցվել է դպրոց-ընտանիք համագործակցության վերաբերյալ ծնողների և մանկավարժների դիրքորոշման դրական փոփոխություն, բարելավվել է համագործակցությունը:
6. Դպրոցի և ընտանիքի համագործակցության արդյունավետության բարձրացմանը նպաստում են նաև առաջարկված ձևերը (միջսերնդային փոխգործակցություն, ընտանեկան ուսուցման կենտրոններ, ընտանեկան ձեռներեցության կենտրոններ, ընտանեկան մշակութային օրեր, ընտանեկան տեխնիկական աջակցության ցանց, ընտանեկան առողջական խմբեր), սկզբունքները (հավասար ներգրավվածության, ուսուցման փորձի համատեղ

ստեղծման, համայնքի ներառման) և մեթոդները (առասպելական իրավիճակներ, բեկորների ամբողջացում, ճկուն շրջանակ, վարքագծային մոդել, անտեսանելի վստահություն, խոսի՛ր նկարի միջոցով, զգացմունքների քարտեզագրում):

7. Ուսանողների համար մեր կողմից փորձարկված դասընթացը ևս ցույց տվեց իր կարևորությունը և արդյունավետությունը, ինչի մասին վկայում են ունկնդիրների կողմից դասընթացի գնահատման արդյունքները:

Ելնելով մեր կատարած հետազոտություններից առաջարկում ենք.

1. Ներդնել դպրոցում մեր կողմից մշակված և փորձարկված «Դպրոց-ընտանիք համագործակցությունն ընդհանուր ներառականության համատեքստում» դասընթացը, որը կարող է հիմք հանդիսանալ նմանատիպ դասընթացների մշակման համար:

2. Ծնողների հետ աշխատանքները կազմակերպելիս պարտադիր կատարել գործունեության գնահատում՝ օգտվելով մեր կողմից մշակված գնահատման սանդղակից:

3. Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ ծնողների, հատուկ մասնագետների և համայնքի ներկայացուցիչների հետ՝ կարիքները վերհանելու և լուծումներ գտնելու նպատակով:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակած հետևյալ աշխատանքներում.

1. Հովհաննիսյան Ն.Ա., Սահմանափակ հնարավորություններով երեխաների նկատմամբ վերաբերմունքը հնագույն քաղաքակրթությունից մինչև մեր օրեր, ՎՊՀ Գիտական տեղեկագիր, Ա Պրակ, №1, Երևան: 2020, էջ 278-289

2. Հովհաննիսյան Ն.Ա., Ներառական կրթության կազմակերպման հիմնախնդիրները հանրակրթական դպրոցում, ՎՊՀ Գիտական տեղեկագիր, Ա Պրակ, №2, Երևան: 2020. – էջ 113-122

3. Оганнисян Н.А., Геворкян П.О., Взаимодействие школы и семьи в контексте инклюзивного образования, The 1st International scientific and

practical conference “Science, innovations and education: problems and prospects” (August 18-20, 2021) CPN Publishing Group, Tokyo, Japan. 2021. p. 376-379

4. Оганнисян Н.А., Роль семьи в воспитании детей с особыми образовательными потребностями, Universum: психология и образование: научный журнал. – № 11(101). М., Изд. «МЦНО», 2022. стр. 19-21

5. Hovhannisyan N.A., Modernization of the Forms of School-Family Cooperation in the Terms of General Inclusion, The Journal of Applied Linguistic and Intercultural Studies (JALIS) published by the Angel Kanchev University of Ruse (Bulgaria). Issue 4. 2023, p. 1-10

6. Оганнисян Н.А., Геворкян П.О., Приемы педагогического воздействия в процессе обучения учеников с особыми образовательными потребностями, ШГУ, Ученые записки, Выпуск Б, 2024. Гюмри. 2023, стр. 273-284

7. Հովհաննիսյան Ն.Ա., «Դպրոց-ընտանիք համագործակցությունն ընդհանուր ներառականության համատեքստում» դասընթացի ներդրումը հիմնական դպրոցում՝ որպես կապի արդյունավետության պայման, «Մանկավարժական միտք» ամսագիր, Երևան. 2024, թիվ 1-2, էջ 263-269

Оганнисян Наре Арменовна

РЕАЛИЗАЦИЯ ШКОЛЬНО-СЕМЕЙНОГО СОТРУДНИЧЕСТВА В УСЛОВИЯХ ОБЩЕЙ ИНКЛЮЗИИ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- «Теория и история педагогики».

Защита диссертации состоится 29 ноября 2024г. в 14^{00} на заседании специализированного совета 058 “Педагогика” Комитета по Высшему Образованию и Науке РА по присуждению ученых степеней при Ереванском государственном университете по адресу ул. Абовяна 25^{a}, 0025, г. Ереван, РА.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Семья – первый социальный институт формирования и развития личности ребенка. Только в позитивной и благоприятной семейной атмосфере можно воспитать ответственного, вежливого и умного ребенка, несущего важные социальные ценности.

Продуктивное воспитание ребенка обусловливается эффективным сотрудничеством школы и семьи. Без этого сотрудничества не может быть полноценно реализован не только образовательный процесс школы, но и всестороннее развитие личности.

Однако после того, как учащиеся с особыми образовательными потребностями поступили в общеобразовательную школу, проблема взаимодействия школы и семьи стало особо актуальной и это послужило основой для выбора темы исследования.

Цель исследования. Изучить связи школы и семьи, разработать модель сотрудничества в условиях всеобщей инклюзивности и инновационные курсы для реализации этого сотрудничества.

Задачи исследования.

1. изучить и проанализировать научные источники, относящиеся к теме,
2. изучить современное состояние сотрудничества школы и семьи,
3. выяснить позицию родителей и учителей по отношению к инклюзивному образованию,
4. разработать модель сотрудничества школы и семьи,

5. провести социологические опросы по проблеме и проанализировать результаты,

6. разработать, внедрить и экспериментально обосновать продуктивность курса «Сотрудничество школы и семьи в условиях всеобщей инклюзии».

Научная новизна исследования.

1. на основе проведенных курсов и социологических опросов зафиксировано положительное изменение позиции родителей и педагогов относительно сотрудничества школы и семьи,

2. разработана модель школьно-семейного сотрудничества, новые формы, принципы и методы ее реализации в соответствии с современными условиями образования,

3. разработаны, внедрены и апробированы курсы «Школьно-семейное сотрудничество в условиях всеобщей инклюзии» для родителей, педагогов и учащихся,

4. проведены и проанализированы результаты социологических опросов по данному вопросу.

Теоретическая значимость исследования. Теория педагогики обогатилась новыми формами, принципами и методами сотрудничества школы и семьи.

Практическая значимость исследования. Материалы диссертации могут быть использованы учителями общеобразовательных школ и административными работниками в процессе обеспечения сотрудничества школы и семьи. Его также можно использовать в учреждениях осуществляющими подготовку и переподготовку педагогов в содержании различных курсов.

Структура и объем диссертации. Диссертация общим объемом в 214 страниц состоит из введения, трех глав, заключения, рекомендаций, списка использованной литературы, 5 таблиц, 31 графиков и 8 приложений.

Hovhannisyan Nare Armen

IMPLEMENTATION OF SCHOOL-FAMILY COOPERATION IN THE CONDITIONS OF GENERAL INCLUSION

Thesis for the degree of Candidate of Sciences in Pedagogy, specialty 13.00.01 "Theory and History of Pedagogy".

The defense of the thesis will be held on 29 November 2024, at 14^{00} at the session of the Special Board 058 HESC (Higher Education and Science Committee) of RA to award a scientific degree at Yerevan State University at Abovyan str. 52^{a}, 0025, Yerevan, Armenia.

SUMMARY

The topicality of the research. The family is the first social institution for the formation and development of a child's personality. Only in a positive and favorable family atmosphere can one raise a responsible, polite and intelligent child who carries important social values.

Productive education of a child is determined by effective cooperation between the school and the family. Without this cooperation, not only the educational process of the school, but also the comprehensive development of the individual cannot be fully realized.

However, after students with special educational needs entered a general education school, the problem of interaction between school and family became particularly relevant and this served as the basis for choosing the research topic.

The aim of the research. To study the links between school and family cooperation and to develop a model of cooperation in the context of universal inclusiveness and innovative courses for the implementation of this cooperation.

The objectives of the research:

1. study and analyze the scientific sources related to the topic,
2. study the current state of school-family cooperation,
3. find out the position of parents and teachers towards inclusive education,
4. develop a school-family cooperation model,
5. to conduct sociological surveys on the issue and analyze the results,

6. develop, introduce and experimentally confirm the course "School-family cooperation in the context of general inclusion".

The scientific novelty of the research:

1. based on the conducted courses and sociological surveys, a positive change in the position of parents and educators regarding school-family cooperation was registered,

2. a model of school-family cooperation, new forms, principles and methods of its implementation were developed in accordance with the current conditions of education,

3. "School-family cooperation in the context of general inclusion" courses for parents, educators and students were developed, tested, implemented and approved,

4. the results of sociological surveys on the issue were conducted and analyzed.

The theoretical significance of the research. The theory of pedagogy was enriched with new forms, principles and methods of school-family cooperation.

The practical significance of the research. The materials of the dissertation can be used by comprehensive school teachers and administrative staff in the process of ensuring school-family cooperation. It can also be used in the content of various courses in teacher training institutions.

The structure and volume of the research. The thesis is 214 pages and comprises an introduction, three chapters, a conclusion, suggestions, a list of references, 5 tables, 31 graphs and 8 appendices.